

Համարը N 648
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2000.10.31/25(123)
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 14.10.2000

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 14.10.2000
Ստորագրման ամսաթիվը 14.10.2000
Վավերացման ամսաթիվը 14.10.2000
Ուժը կորցնելու ամսաթիվը

Մայր փաստաթուղթ: [Կառավ, 14.10.2000, N 648](#)

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝

[Կառավ, 18.07.2002, N 1016-Ն](#)

Համապատասխան ինկորպորացիան՝

Կառավ, 14.10.2000, N 648

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՆՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
14 հոկտեմբերի 2000 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2000 թվականի N 648
քաղ. Երևան

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՆՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 3-րդ կետին, 15 հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետին և «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Հաստատել ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծման ու ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունները տեղեկատվությամբ ապահովելու կարգը (կցվում է):
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հոկտեմբերի 14-ից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ա. Մարգարյան

Կ Ա Ր Գ

ՍՏԱՆՂԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՍՏԱՆՂԱՐՏԱՑՄԱՆ, ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

1. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդն ստեղծում և վարում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությունը (այսուհետև՝ Հայպետստանդարտ):

2. Հայպետստանդարտը՝

ա) կազմավորում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի տեղեկատվական պաշարները.

բ) ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտների պահանջներին համապատասխան կազմակերպում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի պահումը և իրականացնում դրանց հաշվառումն ու վարումը.

գ) տեղեկատվություն է տրամադրում ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև այլ պետությունների ազգային կազմակերպություններին.

դ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդից օգտվողներին ապահովում է անհրաժեշտ տեղեկատվությամբ և նորմատիվ փաստաթղթերով.

ե) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը համալրելու նպատակով համագործակցում է ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման միջազգային, տարածաշրջանային ու այլ պետությունների ազգային կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ:

3. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը համալրվում է՝

ա) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառներին վերաբերող իրավական ու գերատեսչական նորմատիվ ակտերով (տեխնիկական կանոնակարգերով),

բ) ազգային ստանդարտներով,

գ) տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգիչներով,

դ) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառների միջազգային, տարածաշրջանային, միջպետական համաձայնագրերով, կանոնակարգերով, հրահանգներով, մեթոդական ցուցումներով, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտներով, ստանդարտների նախագծերով և այլ պետությունների ազգային ստանդարտներով,

ե) տեխնիկական պայմաններով,

զ) ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման համակարգերով սահմանված կանոններով ու այլ փաստաթղթերով:

4. (4-րդ կետն ուժը կորցրել է 18.07.02 N 1016-Ն)

5. Հայպետստանդարտն իր հարցման կենտրոնի միջոցով ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններին է տրամադրում տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների և համապատասխանության հավաստման կանոնների, հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների, փորձարկման լաբորատորիաների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառվող համապատասխանության նշանների մասին տեղեկատվությունը: